նանշելու, բայց Կիրակոս Բանասէրը յատուկ շեշտում է այդ իրողութիւնը։ «Եւ Տէր Կիրակոս կաթուղիկոսն զամենայն անէծքս երարձ ի բանադրողաց և ի բանադրելոցն»։ «Եւ յայս որ պատճառ և միջնորդ և աւգնական աղատութեան և աւրհնութեան լուսաւոր հոգին եղև, մեծ վարդապետ Թովմա»*։

Բայց Թովմայի գործունէութիւնն Էջմիածնում երկար չտևեց, ինչպէս Կիրակոսի կաթուղիկոսութիւնը։ Հետզհետէ կազմուեցաւ հակառակ մի կուսակցութիւն ընդդէմ Վիրապեցու՝ Յովհաննէս Կոլոտիկ վարդապետի գլխաւորութեամբ, որոնց և յաջողուեց տապալել նորընտիր կաթուղիկոսին և նորա տեղը Գրիգոր Մակուեցուն դնել։ Ադուր բէկի մօտ եղած քննութեան ժամանակ ներկայ էր և Թովման, որի քեռորդի Ծերունը երիտասարդական տաքութեամբ չկարողանալով համբերել հակառակորդների զրպարտութիւններին, բարձր ձայնով ասաց. «Սոքա ամենեքեան անհաւատ գոլով և ստախօս քրիստոնեայք, ոչ են ճշմարիտ, այլ խարեբայք»։ Բայց հակառակորդների տուած կաշառքը Ադուլ բէգին վճռում է գործը և հաստատուում Գրիգոր Մակուեցին**։ Այդ է պատճառը, որ մի ժամանակագրութիւն, որ Դաւրիժեցին առել է իւր պատմութեան մէջ, Մակուեցու կաթուղիկոսութիւնը համարում է «դաբալով և թուրքով»։ Փիրղալէմեանը այս յիշատակարանի հեղինակ Թովմային է համարում. այնտեղ խօսք կայ հեղինակին և Սարգիս վարդապետին տուգանելու մասին. «և զինչ վատութիւն, որ ապարին Կիրակոսի կաթուղիկոսին և Սարգսի վարդապետին (Սալնապատեցի) և ինձ, Աստուած թողու զմեղս նոցա»***։ Այս դէպքը պատմում է և Թովման, Սարգսի հետ աւելացնելով և Կիրակոս Ռշտունցու անունը, որոնք Անտոն և Զաքարէ եպիսկոպոսների մատնութեամբ տուգանքի ենթարկուեցան, բայց իւր մասին խօսք չկայ։ Այս հանգամանքը մտածել է տալիս, թէ մի գուցէ յիշատակարանի հեղինակը Կիրակոս Ռշտունցին է։ Ինչպէս էլ լինի, Թովման շատ վիշտ կրեց այդ դէպքի պատճառով, որ պատմում է և Կիրակոս Բանասէրը հակիրճ խօսքերով։ «Եւ շատ նեղութիւն և վիշտս կրեաց վասն Էջմիածնին և Կիրակոս կաթուղիկոսին համար յանաւրինաց և ի սուտ եղբարց»†։

Կիրակոս Բանասէրի ասելով՝ Թովման Էջմիածնում երկու տարի է մնացել. «տարի մի Կիրակոս կաթուղիկոսովն և տարի մի

---

* Նոր Նիւթեր. Ար. 746 (9)։

** Կոստ. «Յիշատակարան»-ի Գ. գլուխ.

*** Առաքել Դաւրիժեցի 628։ Նստարբ. 130.

† Նոր Նիւթեր. Ար. 747. (10)։